

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼՈՒՍԻՆԵ ԱՇՈՏԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՌԵԶԱ ՇԱՀ ՓԱՀԼԱՎԻԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆՈՒՄ (1925-1941թթ.)

Է.00.02 «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

մասնագիտությամբ

պատմական գիտությունների բեկնածուի գիտական աստիճանի

հայցման ատենախոսության

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2009

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վ.Ա. Բայբուրդյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հ.Մ. Աբրահամյան

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գ.Մ. Իսկանդարյան

Առաջատար կազմակերպություն՝
Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան


Պաշտպանությունը կայանալու է 2009թ. հունիսի 16-ին՝ ժ. 13.00-ին, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության
ինստիտուտում գործող՝ գիտական աստիճաններ շնորհող ՀՀ ԲՈՀ-ի 006 մասնագիտական խորհրդի
նիստում (հասցեն՝ 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա, 24 գ):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2009թ. մայիսի 16-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

պատմական գիտությունների թեկնածու՝



Ռ. Ղազարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

20-րդ դարի առաջին կեսի՝ Իրանի պատմության ուսումնասիրությունն ունի կարևոր
գիտական նշանակություն ոչ միայն բուն Իրանում տեղի ունեցած գործընթացները, այլև
սահմանակից և պարզապես տարածաշրջանում հետաքրքրություններ ունեցող պետությունների
հետ հարաբերությունները լավագույնս հասկանալու համար: Այդ համատեքստում հատկապես
կարևորվում է Իրանի պատմության նորագույն ժամանակաշրջանի սկիզբն ազդարարող՝
Փահլավիների դինաստիայի հիմնադիր Ռեզա շահի ներքին քաղաքականության
ուսումնասիրությունը:

Իրանի աշխարհագրական դիրքը, որպես Եվրոպան Ասիային կապող ուղի, և բնական
պաշարներով հարուստ ընդերքը դարեր ի վեր գրավել են եվրոպական հզոր պետությունների
ուշադրությունը: Նման պայմաններում Իրանը դարձել էր կռվան ժամանակի երկու գերիզոր
տերությունների՝ Ցարական Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի միջև, որոնք էլ, երկարատև
պայքարից հետո համաձայնության գալով, բաժանել էին երկիրը ազդեցության գոտիների,
որտեղ ունեին անսահմանափակ իրավունքներ: 20-րդ դարի սկզբին Իրանի համար մղվող
պայքարին էր միացել նաև Գերմանիան: Որքան էլ հակասական է, հենց այդ մրցակցությունն էր
պահպանում Իրանի կիսանկախ վիճակը:

Սակայն 1917թ. բոլշևիկյան հեղաշրջումից հետո, երբ Խորհրդային Միությունը, զոհե
առերես, «հրաժարվեց» Իրանի համար մղվող պայքարից, երկիրը կանգնեց Մեծ Բրիտանիայի
պրոտեկտորատը դառնալու վտանգի առջև: Սակայն, սովյալ դեպքում, բրիտանացիների
մեթոդներն ունեցան լիարժեք հակադարձ հետևանքներ: Նրանք ձեռնարկեցին 1921թ.
փետրվարյան հեղաշրջումը, որի արդյունքում Կոզակական բրիգադի փոխգնդապետ՝ մինչ այդ
քաղաքական շրջանակներում անհայտ, Ռեզա խանը դարձավ երկրի իրական ղեկավարը:
1925թ. դեկտեմբերի 12-ին Սահմանադիր ժողովի որոշմամբ՝ տապալված Ղաջարական
դինաստիայի փոխարեն Իրանում հիմք դրվեց Փահլավիների դինաստիային, և Ռեզա խանը
հռչակվեց շահ: Բնական է, որ, չնայած բացահայտ փաստերին և ժամանակակիցներին

վկայություններին, բրիտանական կողմը ժխտում էր իր մասնակցությունը Իրանի պատմության կերտմանը: Իսկ Ռեզա շահի հակառակորդներն, ընդհակառակը, շահարկելով բրիտանացիների և հեղաշրջման մասնակիցների համագործակցությունը, փորձում էին ապացուցել, որ նա բրիտանական դրածո էր և պաշտպանում էր Մեծ Բրիտանիայի շահերը: Ուստի նշված իրողությունների համակողմանի ուսումնասիրությունն արդիական է նաև հարցի օբյեկտիվ լուսաբանման տեսանկյունից:

Իր կառավարման տարիների ընթացքում (1925-1941թթ.) Ռեզա շահն առաջին հերթին Իրանում ստեղծեց միասնական բանակ, որի միջոցով վերահաստատեց կենտրոնական իշխանության ազդեցությունը երկրի ողջ տարածքում: Դրանից հետո նա ձեռնամուխ եղավ սոցիալական ոլորտի բարեփոխումներին: Ռեզա շահի ջանքերի շնորհիվ երկրում հիմք դրվեց աշխարհիկ պետական կրթությանը, դատախիզական համակարգին: Նշված ոլորտների բարեփոխումները մեծ ազդեցություն ունեցան կանանց և հոգևորականության կյանքում: Ներքին քաղաքականության հաջորդ բնագավառը տնտեսությունն էր, որտեղ ևս իրականացվեցին արմատական բարեփոխումներ. ստեղծվեց համակարգված ֆինանսական համակարգ, հիմք դրվեց արդյունաբերությանը, արտաքին առևտրային հարաբերությունները դրվեցին իրավահավասարության, հավասարակշիռ առևտրի հարթության վրա, ինչպես նաև ստեղծվեց տրանսպորտային և հեռահաղորդակցության միասնական ցանց: Եթե փորձենք մեկ նախադասությամբ արտահայտել շուրջ երկու տասնամյակի ընթացքում իրականացված բարեփոխումների արդյունքը, ապա պետք է նշենք, որ Ռեզա շահը ստեղծեց նախադրյալներ երբեմնի հզոր Իրանի վերածննդի համար: Նրա քաղաքականության արգասիքներն ակնհայտ են Իրանում առ այսօր:

Հարկ է նշել, որ բարեփոխումները Ռեզա շահ Փահլավիի անձին վերագրելը մեր կողմից «Անձի պաշտամունքի» դրսևորում չէ: Բոլոր միջոցառումներն, անշուշտ, գործի էին դրվում կառավարության կողմից: Սակայն հենց ինքը՝ Ռեզա շահն էր կառավարության մեջ ընդգրկել բարձր որակավորում ունեցող՝ այնպիսի մարդկանց (Դավեր, Թեյմուրթաշ և այլն), ովքեր ի գործ էին Իրանը տանել զարգացման ճանապարհով և իրականացնել որակյալ կառավարում: Հենց շահն էր գաղափարակիրը, քաղաքական կուրսը նախագծողն ու վերահսկողը:

Անժխտելի փաստ է, որ Ռեզա շահ Փահլավիի կառավարման ժամանակաշրջանը շրջադարձային փուլ ազդարարեց Իրանի համար թե՛ ներքին կյանքի և թե՛ արտաքին հարաբերությունների տեսանկյունից: Ռեզա շահի նպատակները փոխկապակցված էին. հաստատել կենտրոնական հզոր իշխանություն և կայունություն Իրանում, որը հնարավորություն կընձեռներ երկիրը սոցիալ-տնտեսական զարգացման ուղիով տանելու համար: Իսկ Իրանի հզորությունն իր հերթին արտաքին ուժերի ազդեցությունից ձեռքազատվելու և ինքնուրույն ճանապարհով զարգանալու երաշխիք էր: Լինելով հայրենասեր և, բառի դրական իմաստով, ազգայնական գործիչ, Ռեզա շահը միշտ ձգտել է երկիրն ազատել օտար ազդեցությունից և հաստատել ինքնուրույն գործող իշխանություն: Նրա բոլոր բարեփոխումներն իրականացվում էին այդ համատեքստում: Ռեզա շահին հաջողվեց քառսային իրավիճակից հանել, կենտրոնացնել և աշխարհիկ ուղու վրա դնել Իրանը: Այդուհանդերձ, ժամանակի գերիզուրեթյունները՝ ԽՍՀՄ-ը, Մեծ Բրիտանիան և Գերմանիան, ուղղակի և անուղղակի միջոցներով շարունակում էին միջամտել Իրանի ներքին գործերին, որի արդյունքում Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, ինչպես և Առաջին աշխարհամարտի տարիներին, Իրանը ևս մեկ անգամ դարձավ մեծ տերությունների քաղաքական միջամտությունների գոհը:

Իրանում կառավարող՝ նոր դինաստիայի հիմնադիր Ռեզա շահ Փահլավիի բարեփոխումների վերաբերյալ պատմագրության մեջ առկա են հակասական կարծիքներ և միակողմանի մոտեցումներ: Առ այսօր հրապարակի վրա չկա որևէ ընդհանրական աշխատություն, որտեղ համակողմանի և մանրամասն ուսումնասիրված լինեին Ռեզա շահ Փահլավիի բարեփոխումների բոլոր ոլորտները: Ուստի ատենախոսության թեման արդիական է նաև այն առումով, որ նրանում փորձ է արվել հնարավորինս անաչառ մոտեցում ցուցաբերել և գիտականորեն վերլուծել ներկայացվող ժամանակաշրջանում տեղի ունեցած իրողություններն Իրանի ներքին կյանքի բոլոր բնագավառներում:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ատենախոսության նպատակն է եղել համալիր ուսումնասիրության ենթարկել 20-րդ դարի սկզբում Իրանում տիրող ներքաղաքական մթնոլորտն ու արտաքին գործոնները, որոնք

նախադրյալներ ստեղծեցին Փահլավիների գահակալական դինաստիայի հաստատման համար: Դա իր հերթին հնարավորություն է ընձեռել Ռեզա շահ Փահլավիի վարած ներքին քաղաքականության գործընթացն ու հետևանքները համակողմանիորեն ուսումնասիրելու և անաչառ գնահատելու համար: Այդ նպատակով մեր կողմից առաջադրվել են ստորև շարադրված խնդիրները.

- Ուսումնասիրել 20-րդ դարասկզբի Իրանի փաստացի իշխանությունների դերն ու ազդեցությունը երկրի ներքաղաքական կյանքում, առկա քաղաքական ուժերի և հոգևորականության տրամադրությունները, արտաքին գործոնների դերը Փահլավիների դինաստիայի հաստատման գործընթացում:
- Ուսումնասիրել բանակի կազմավորման գործընթացն ու դերը երկրի ներքին կայունության և կենտրոնական իշխանության վերահաստատման գործում:
- Լուսաբանել Ռեզա շահ Փահլավիի ազգայնական քաղաքականության՝ պանիրանիզմի, էությունն ու ազդեցությունը իրանական հասարակության կյանքում:
- Իրանի առաջին Սահմանադրության համալիր ուսումնասիրության հիման վրա վերլուծել Ռեզա շահի կառավարման բռնապետական սկզբունքն ու հետևանքները Իրանի պետական կառավարման և հասարակական հարաբերությունների ոլորտում:
- Ուսումնասիրել Ռեզա շահ Փահլավիի կառավարման շրջանում իրականացված բարեփոխումները Իրանի արդիականացման և աշխարհիկացման ուղղությամբ և դրանց հետևանքները բնակչության համար:
- Մանրամասն քննել կրթական, դատաիրավական ոլորտի այն բարեփոխումները, որոնք իրենց ազդեցությունն են ունեցել կանանց կարգավիճակի բարելավման և, ընդհակառակը, հոգևորականության դիրքերի թուլացման գործընթացում:
- Համալիր ուսումնասիրության ենթարկել ֆինանսատնտեսական ոլորտի բարեփոխումները: Համադրելով տարաբնույթ աղբյուրներում ներկայացված և տարբեր մոտեցումներով հեղինակների կողմից վերլուծության ենթարկված փաստերն ու

տեղեկությունները, կազմել Ռեզա շահի տնտեսական բարեփոխումների ամբողջական պատկերը և փաստարկված ներկայացնել դրա արդյունքները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ռեզա շահ Փահլավիի կառավարության ներքին քաղաքականության առանձին խնդիրներ բազմիցս ուսումնասիրության առարկա են դարձել տարբեր հեղինակների աշխատություններում: Մասնավորապես, արևմտյան պատմաբանների և խորհրդային գաղափարայնացված պետության պատմագրության կողմից Ռեզա շահի կառավարման շրջանի վերաբերյալ տրվել են ծայրահեղ և մեծ մասամբ հակասական գնահատականներ: Ինչ վերաբերում է հայրենական իրանագիտությանը, ապա նրա կողմից նշված ժամանակաշրջանը չի արժանացել գիտական համալիր ուսումնասիրության:

Սույն ատենախոսությունն իր բովանդակությամբ և հարցադրումներով հայ իրանագիտության մեջ առաջին ուսումնասիրությունն է, որտեղ փորձ է արվում համակողմանիորեն լուսաբանել Փահլավիների դինաստիայի հաստատման նախադրյալները, Ռեզա շահի վարած ներքին քաղաքականության գործընթացն ու հետևանքները: Փաստագրական և այլաբեկ հետազոտությունների հենքի վրա փորձ է արվել անաչառ վերլուծությամբ, գիտության վերջին տվյալների հիման վրա նորովի մեկնաբանել տվյալ ժամանակաշրջանի իրողությունները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՄԱՀՍԱՆՆԵՐԸ

Ատենախոսության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են 1925-1941թվականները՝ Իրանում Փահլավիների դինաստիայի հաստատումից մինչև 1941 թ., երբ Դաշնակիցների զորքերը հյուսիսից և հարավից մուտք գործեցին Իրանի տարածք, իսկ Ռեզա շահը, դինաստիան փրկելու նպատակով, հրաժարվեց գահից: Դա Իրանի ժամանակակից պատմության մեջ շրջադարձային մի փուլ էր, երբ երկիրն իր վրայից թոթափելով կիսագաղութային անցյալը՝ թևակոխեց արդիականացման և տնտեսական, քաղաքական ու

մշակութային զարգացման մի նոր դարաշրջան: Ատենախոսության ժամանակաշրջանի ընտրությունը պայմանավորված է Ռեզա շահի Փահլավիի գահակալության տարիների ընթացքում կատարված իրողությունների ուսումնասիրության անհրաժեշտությամբ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսության մեթոդաբանական հիմքն Իրանում Փահլավիների դինաստիայի հաստատման ներքին և արտաքին նախադրյալների, Ռեզա շահի կառավարության վարած ներքին քաղաքականության նպատակների, ուղղվածությունը պայմանավորող հիմնական գործոնների, բարեփոխումների գործընթացի և հետևանքների վերաբերյալ առկա տեսակետների և հարցադրումների քննական մեկնությունն է և փաստերի համեմատական-համադրական վերլուծության սկզբունքը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սույն ատենախոսության մեջ առաջ քաշված հիմնադրույթները, մեկնաբանություններն ու եզրահանգումները կարող են օգտագործվել Իրանի նորագույն պատմության առանձին հիմնախնդիրների ուսումնասիրության, ինչպես նաև հետագա զարգացումները լավագույնս հասկանալու և գնահատելու համար: Ատենախոսության մեջ արծարծված դրույթները՝ մասնավորապես երկրի սոցիալ-տնտեսական ոլորտի բարեփոխումների վերաբերյալ, կարող են օգտագործվել նաև Իրանի նորագույն պատմությանը նվիրված համալսարանական դասախոսություններում և հատուկ դասընթացներում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները լուսաբանվել են հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում, Երիտասարդ արևելագետների հանրապետական գիտական նստաշրջաններում կարդացած զեկույցներում, ինչպես նաև Կենտրոնական եվրոպական համալսարանի «Ամառային դպրոցի» կողմից կազմակերպված՝ «Վերանայելով Իսլամական ռեֆորմիզմը» խորագիրը կրող դասընթացների ընթացքում

գումարված կլոր սեղանների ժամանակ: Ատենախոսության վերաբերյալ՝ հեղինակի հրատարակած հոդվածների ցանկը ներկայացված է սեղանագրի վերջում:

Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի ղեղավարված նիստում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսությունը գրվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն, պարսկերեն լեզուներով՝ տարաբնույթ աղբյուրների և հետազոտությունների հիման վրա:

Ատենախոսության աղբյուրագիտական հենքն են կազմել Իրանի պատմության նոր և նորագույն ժամանակաշրջանում կնքված միջպետական այն պայմանագրերը, որոնք որոշիչ դեր են ունեցել երկիրը օտար տիրապետությանը ենթարկելու գործընթացում¹: Արժեքավոր են նաև այն պայմանագրերը, որոնք, ընդհակառակը, հանդիսացել են Իրանը օտար տիրապետությունից ազատագրելու իրավական հիմքն ու երկրի ինքնուրույնության երաշխիքը²: Ատենախոսության քննյալի համալիր ուսումնասիրության և Ռեզա շահի կառավարության ընթացքում իրականացված բարեփոխումների ծավալը լիարժեք ընկալելու նպատակով խորապես ուսումնասիրել ենք Իրանի առաջին Սահմանադրությունը (1906թ.)³, Սահմանադրության

¹ *Treaty of Turkmanchai between Persia and Russia, dated 21st February 1828*, Treaty No XVIII, *Treaty of peace with the Shah of Persia concluded at Paris on the 4th March 1857*, *Commercial Convention between Persia and Russia, dated 27th October 1901*, Treaty No XXV, *Agreement between Great Britain and Persia modifying the Commercial Convention of 1903, dated 21st March, 1920*, Treaty No XXI, *Convention between Great Britain and Russia regarding the zones of influence in Persia, Afghanistan and Tibet, dated 31st August, 1907*, *Arrangement concerning Persia*, Treaty No XXIV, *Agreement between His Britannic Majesty's Government and the Persian Government. Signed at Tehran, August 9, 1919*, St'u' Collection of Treaties, Engagements and Sanads: Relating to India and Neighbouring Countries, Vol. XIII.

² Doc. No 17, *Denunciation of Tsarist Privileges in Persia by the Soviet and Persian Governments, 26 June, 1918*, Doc. No 33, *Treaty of Friendship: Persia and Russia, 26 February-12 December 1921*, St'u' Diplomacy in the Near and Middle East: A Documentary Record: 1914-1956, by J.C. Hurewitz, vol. II.- N.Y., 1972, *Tariff Autonomy Treaty between Great Britain and Persia, dated 10th May 1928*, St'u' Collection of Treaties, Engagements and Sanads: Relating to India and Neighbouring Countries, Vol. XIII, Doc No 58, *Revised Agreement: Persia and Anglo-Persian Oil Company, 29 April, 1933*, St'u' Diplomacy in the Near and Middle East: A Documentary Record: 1914-1956, vol. II, *Обмен нотами о торговых взаимоотношениях между СССР и Персией, произведенный в г. Москве 1 окт. 1927г.*

³ The Fundamental Laws of December 30, 1906, Constitutions, Electoral Laws, Treaties of States in the Near and Middle East (Collected by Helen M. Davis), Durham, 1953.

Լրացումը (1907թ.)⁴, ինչպես նաև մեր կողմից հատուկ ուշադրության և մանրամասն վերլուծության է ենթարկվել իսլամի սուրբ գիրքը՝ Դուրանը⁵:

Արժեքավոր են նաև Խորհրդային Ռուսաստանի հետախուզության ներկայացրած տեղեկություններն Իրանի ներքին քաղաքական իրավիճակի և զինված ուժերի մասին⁶, ինչպես նաև Առևտրային պալատի ներկայացրած տեղեկություններն Իրանի մաքսային ոլորտի նկատմամբ Կապիտուլյացիոն համակարգի ազդեցության և ներկայացվող ժամանակաշրջանում այդ ոլորտում իրականացված բարեփոխումների վերաբերյալ⁷:

Ատենախոսությունը գրելիս լայնորեն օգտագործել ենք նաև դեպքերի անմիջական մասնակիցների⁸ և, ընդհանրապես, ժամանակակիցների⁹ հուշերը:

Ատենախոսության մեջ առաջ քաշված հիմնախնդիրների, Իրանի ներքաղաքական զարգացումների և արտաքին ուժերի ազդեցության պատճառների և հետևանքների համակողմանի ուսումնասիրությանն ու ճիշտ ըմբռնելուն մեծապես նպաստել են հայ ակադեմիկոս իրանագետ Վ. Բայբուրդյանի¹⁰ աշխատությունները: Օգտագործել ենք նաև երիտասարդ իրանագետներ Գ. Բականդարյանի¹¹, Ն. Նավասարդյանի¹² և թուրքագետ Վ. Տեր-Մաթևոսյանի¹³ հետազոտությունները: Արժեքավոր են արևմուտքում իրենց գիտական գործունեությունը

⁴ The Supplementary Fundamental Laws of October 7, 1907. A Brief Narrative of Recent Events in Persia: Followed by a Translation of "The Four Pillars of the Persian Constitution", by Ed. Browne, London, 1909.

⁵ Коран, Москва, 1990.

⁶ Персия: Обзор вооруженных сил, международного и внутреннего политического положения и военно-географическое описание к 1-му ноября 1921г., Материалы стратегической разведки.-Б.м., 1921, Персия: Обзор вооруженных сил с приложением очерка экономического и политического положения по данным к 1 июля 1923г. (составил Львов Ф.П.), Материалы стратегической разведки, Москва, 1923.

⁷ Генин И.А., Таможенная политика стран Востока, Всесоюзная торговая палата, Москва, Ленинград, 1933.

⁸ Бажанов Б., Воспоминания бывшего секретаря Сталина, http://www.hrono.info/libris/lib_b/bazhan16.html.

⁹ Mills Spaulgh Arthur Chester, Americans in Persia, N.Y., 1976, Arfa General Hasan, Under Five Shahs, L., 1964.

¹⁰ Ն.Կ.Մ. Մահամադ Ինեզա շահ Փախլավի, Առաքելություն Հայրենիքիս համար, Թեհրան, 1973, Farmanfarmaian Manucher and Farmanfarmaian Roxane, Blood and Oil (Inside the Shah's Iran), N.Y., 1999, Lieut.-Colonel W.G. Grey, Recent Persian History (Lecture given to the Central Asian Society on November 12, 1925), Journal of the Central Asian Society, Vol. XIII, 1926, Part I, Bourke-Burrowes D., Changes and Development in Persia during the Pahlavi Re'gime: (Lecture given to the Central Asian Society on November 5, 1930) Journal of the Central Asian Society, Vol. XVIII, January 1931, Part I, Ba'mda'd Badr ol-Muluk, From Darkness into Light: Women's Emancipation in Iran, N.Y., 1977, Хацевин З.Л., Персиянка, Москва, 1928.

¹¹ Բայբուրդյան Վ., Իրանն այսօր, Երևան, 1999, Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն (Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2005, Բայբուրդյան Վ., Քրդերը, հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, Երևան, 2008:

¹² Բականդարյան Գ.Մ., Իրանա-ամերիկյան հարաբերությունները 1942-1960 թվականներին, Ատենախոսություն, Երևան, 2003:

¹³ Նավասարդյան Ն., Իրանում երկաթուղային շինարարության հարցի շուրջ (XIX դարի վերջ-XX դարի սկիզբ), Մերձավոր Արևելք. Պատմություն, քաղաքականություն, մշակույթ (նոդվածների ժողովածու), Եր., 2007:

¹⁴ Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում (1970-2001թթ.), Երևան, 2008:

ծավալած՝ հայագրի ուսումնասիրողներ Երվանդ Աբրահամյանի¹⁴ և Էլիզ Սանասարյանի¹⁵ աշխատությունները:

Իրանի նորագույն շրջանի ուսումնասիրությանը մեծապես նպաստել են ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի կողմից հրատարակվող՝ «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» և «Մերձավոր Արևելք» մատենաշարերը:

Ատենախոսությունը գրելիս օգտագործել ենք իրանցի հեղինակների աշխատությունները՝ ինչպես պարսկերեն¹⁶, այնպես էլ՝ անգլերեն¹⁷ և ռուսերեն¹⁸ լեզուներով, որոնցից, թերևս, առավել մեծ արժեք է ներկայացնում մեզ համար Բանանի Ամինի ծավալուն աշխատությունը խնդրո առարկա հանդիսացող թեմայի շուրջ:

Խորհրդային հեղինակներից ատենախոսության հետազոտական աշխատանքների գործընթացում առավել արժեքավոր են եղել հատկապես ֆինանսատնտեսական ոլորտին վերաբերող՝ Մ.Ի. Վոլոդարսկու, Վ.Ս.Գլուխոդեյի, Ա.Ի. Դեմինի, Ի.Ի. Պալյուկայտիսի¹⁹ աշխատությունները, որոնք հարուստ են փաստագրական նյութով և խորը վերլուծություններով: Ուշադրության են արժանի նաև Իրանդուստի (Վ.Պ. Օսետով), Ն.Ռ. Ռիխսիևայի, Մ. Վիքորնովի²⁰ արժեքավոր աշխատությունները Իրանի ներքին քաղաքական իրավիճակի և, հատկապես, բանակի կազմավորման հարցերի վերաբերյալ: Մեծ արժեք է ներկայացնում Մ.

¹⁴ Abrahamian Er., Iran Between Two Revolutions, Princeton, New Jersey, 1982, Abrahamian Er., Kasravi: The Integrative nationalist of Iran, Towards a Modern Iran, (Studies in Thought, Politics and Society), L., 1980.

¹⁵ Sanasarian E., The Women's Rights Movement in Iran: Mutiny, Apeasement, and Repression from 1900 to Khomeini, N.Y., 1983.

¹⁶ فرهاد رستمی، پهلویها، خاندان پهلوی به روایت استاد، جلد اول: رضا شاه، حکیمی، محمود: تألیف و تدوین: داستانی از عصر رضا شاه، تهران، ۱۳۷۴، عبدالرضا هوشنگ مهدوی، سیاست، دکتر عبدالحسین زرین کوب، روزگار. تاریخ ایران از آغاز تا سقوط سلطنت پهلوی، تهران، ۱۳۷۸، تهران، ۱۳۷۵، خارجی ایران در دوران پهلوی، ۱۳۰۰-۱۹۵۷، تهران، ۱۳۷۵.

¹⁷ Banani Amin, The Modernization of Iran: 1921-1941, Stanford, 1961, Arasteh R., Man and Society in Iran Leiden, 1964, Fathi As., Ahmad Kasravi and Seyyed Jamal Waez on Constitutionalism in Iran, Middle Eastern Studies, L., October, 1993, Vol. 29, No 4, Kazemi F., The Military and Politics in Iran: The Uneasy Symbiosis, Towards a Modern Iran, L., 1980, Saikal A., The Rise and Fall of the Shah, Princeton, 1980, Amuzegar J., The dynamics of the Iranian Revolution: the Pahlavis' Triumph and Tragedy, Albany, 1991.

¹⁸ Годс Реза М., Иран в XX веке: Политическая история, І., 1994.

¹⁹ Володарский М.И., Англо-Иранская нефтяная компания в 1933-1941гг, Ученые записки (Сборник молодых ученых Университета), Кишинев, 1959, Глухоед В.С., Начальный период развития прямого обложения в современном Иране, Иран (сборник статей), М., 1963, Глухоед В.С., Проблемы экономического развития Ирана (20-30-е годы), М., 1968, Демин А.И., Современная иранская деревня, М., 1977, Демин А.И., Социально-экономические и политические предпосылки установления монархии Пехлеви. Иран: очерки новейшей истории, М., 1976, Палюкайтис И.И., Экономическое развитие Ирана, М., 1965.

²⁰ Ирандуст (Осетров В.П.), Персия, Москва-Ленинград, 1927, Рихсиева Н.Р., К истории иранских казачьих частей (по архивным материалам), Ташкент, 1978, Выборнов М., Персия и ее вооруженные силы, Москва, Ленинград, 1928.

Աբրամով²¹ աշխատությունն Իրանի դատական համակարգի բարեփոխումների վերաբերյալ: Հետխորհրդային շրջանի հեղինակների շարքում կարելի է նշել հայազգի մեծանուն գիտնական Ջ.Ա.Արաքսյանի և Ն.Մ. Մամեդովայի աշխատությունները²², որտեղ հեղինակները, դուրս գալով խորհրդային շրջանի գաղափարական կաղապարից, իրողությունները վերլուծում են մոր մոտեցումներով:

Արևմտյան հեղինակների շարքում կարելի է հատկապես առանձնացնել Ռիչարդ Քոքսի, Պիթեր Էյվերիի, Էլվել-Մատտոնի, Ուիլիամ Հասսի, Հարեվիչի, Ջորջ Լենչովսկու, Դոնալդ Ուիլքերի²³ և այլոց արժեքավոր աշխատությունները: Իրանում հոգևորականության դերն ու ազդեցությունը լավագույնս ընկալելու համար արժեքավոր են եղել Նիքի Քեդդիի, Ազար Թաբարիի²⁴, ինչպես նաև Ե.Ա. Դորոշենկոյի և Դ.Կ Դոստովի²⁵ գիտական հոդվածներն ու ծավալուն մեմագրությունները:

Ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ արժեքավոր նյութեր են պարունակում նաև ժամանակի պարբերականներում տեղ գտած լրահոսն ու իրողությունների վերլուծությունները²⁶:

Պետք է նշել, որ, ելնելով քաղաքական դիրքորոշումներից, թե՛ խորհրդային և թե՛ արևմտյան հեղինակները նույն իրադարձությունների վերաբերյալ ցուցաբերել են բոլորովին տարբեր մոտեցումներ: Անշուշտ, խորհրդային շրջանի հեղինակները, ելնելով տիրող

²¹Абрамов С., Реформа суда в современной Персии, (отдельный оттиск из "Изв. Прав. Фак. А.Г.У." В. V-VI), Баку, 1929.

²²Арабаджян З.А., Иран: Власть, реформы, революции (XIX-XX века), М., 1991, Арабаджян З.А., Иран: Противостояние империям (1918-1941), М., 1996, Мамедова Н.М., Особенности развития капитализма в Иране: внутренние факторы (в кн. Социально-экономическое и историческое развитие Южной и Юго-Западной Азии), Москва-Калуга, 1992, Мамедова Н.М., Иран в XX веке. Роль государства в экономическом развитии, М., Мамедова Н.М., Проблемы модернизации и либерализации экономической системы Ирана, Особенности модернизации на мусульманском Востоке. Опыт Турции, Ирана, Афганистана, Пакистана, М., 1997.

²³Avery P., Modern Iran, L., 1965, Cottam R., Nationalism in Iran, Pittsburgh, 1964, Elwell-Sutton L.P., Modern Iran, L., 1941, Elwell-Sutton L.P., Reza Shah the Great: Founder of the Pahlavi Dynasty, Iran Under the Pahlavis (Collected Essays), Stanford, 1978, Элвелл-Саттон Л., Иранская нефть, М., 1956, Haas W., Iran, N.Y., 1946, Hurewitz J.C., Middle East Politics: The Military Dimension, N.Y., W., L., 1969, Lenczowski G., Political Process and Institutions in Iran: The Second Pahlavi Kingship, Iran Under the Pahlavis (Col. Essays), Stanford, 1978, Wilber D., Riza Shah Pahlavi: The Resurrection and Reconstruction of Iran (1878-1944), N.Y., 1975.

²⁴Keddie N., Qajar Iran and The Rise of Reza Khan 1796-1925, California, 1999, Keddie N., Modern Iran: roots and results of revolution, New Haven & L., 2003, Tabari A., The Role of the Clergy in Modern Iranian Politics, Religion and Politics in Iran: Shi'ism from Quietism to Revolution (Col. Essays ed. by Keddie N.), N.H. & L., 1983.

²⁵Дорошенко Е.А., Система просвещения в Иране, М., 1959, Дорошенко Е.А., Роль шиитского духовенства в общественно-политической жизни Ирана (конец XIX-90-е годы XX века), М., 1997, Дустов Д.К., Роль Кумского теологического центра в общественно-политической жизни Ирана (20-80-е годы XX века), М., 1989.

²⁶The Moslem World: Current Topics: New Marriage Laws in Persia, Vol. XXII, No 2, April, 1932, The Moslem World: Current Topics: The Present Situation in Iran, Vol. XXXI, No 1, January, 1941, Journal of the Royal Central Asian Society, Trans-Iranian Railway (Northern Section), Vol. XXIII, July, 1936, Part III.

վարչակարգի առաջացրած պայմաններից, խուսափում էին դեպքերի անաչառ մեկնաբանությունից և դրանք ներկայացնում կոմունիստական քաղաքական տեսանկյունից: Իսկ նույն ժամանակաշրջանում գործող արևմտյան հեղինակների աշխատություններում տեղ գտած մեկնաբանությունները կտրուկ տարբերվում են խորհրդային հեղինակների տեսակետներից: Այդուհանդերձ, այդ աշխատություններում առկա հարուստ փաստագրական նյութը հնարավորություն է ընձեռել, համադրելով դրանք այլ աղբյուրներում և հետազոտություններում առկա տեղեկությունների և դրանց վերլուծությունների հետ, հանգել ատենախսությունում արված եզրահանգումներին: Ուստի ատենախոսությունը շարադրելիս հենվել ենք առավելապես փաստական տվյալների վրա և ցուցաբերել քննական մոտեցում: օգտագործված բոլոր հետազոտությունների նկատմամբ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունն ունի դասական կառուցվածք. բաղկացած է ներածությունից, երեք գլխից (որոնք իրենց հերթին բաժանվում են ենթաբաժինների), եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից ու հավելվածից:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորվում են թեմայի արդիականությունը և գիտական նորությունը, ներկայացվում են հիմնական նպատակներն ու խնդիրները, պարզաբանվում են աշխատանքի մեթոդաբանական հիմքը, կիրառական նշանակությունը և թեմայի ժամանակագրական սահմանների ընտրությունը, տրվում է օգտագործված գրականության համառոտ տեսությունը:

Ատենախոսության առաջին գլխում, որը կրում է «ԻՐԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱՅՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ» վերնագիրը, ներկայացված է Իրանի ներքին քաղաքական մթնոլորտը 20-րդ դարի սկզբին, ինչպես նաև Ռեզա խանի ճանապարհը դեպի Իրանի գահը, և այդ ճանապարհին իրականացված քայլերը երկրի կայունացման և կենտրոնական իշխանության վերահաստատման ուղղությամբ: Այն իր հերթին բաղկացած է չորս ենթաբաժնից:

Առաջին ենթաբաժնում, որը կրում է *«Քաղաքական իրադրությունն Իրանում 20-րդ դարի սկզբին և Փահլավիների դինաստիայի հաստատումը»* վերնագիրը, ներկայացվում և մանրամասն վերլուծության են ենթարկվում դարասկզբի Իրանի ներքաղաքական իրադրությունն ու Փահլավիների դինաստիայի հաստատման ներքին և արտաքին մախադրյալները: 20-րդ դարի սկզբին Իրանը դարձել էր կռվան ժամանակի երկու գերհզոր տերությունների՝ Ցարական Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի միջև: 1917թ. բոլշևիկյան հեղաշրջումից հետո, երբ Խորհրդային Ռուսաստանը «հրաժարվեց» Իրանի համար մղվող պայքարից, Մեծ Բրիտանիան ակտիվացրեց իր գործողությունները «1919թ. Անգլո-իրանական պայմանագիրը» կնքելու ուղղությամբ, որի հետևանքով երկիրը կանգնեց Մեծ Բրիտանիայի պրոտեկտորատը դառնալու վտանգի առջև: Սակայն 1921թ. փետրվարյան հեղաշրջման արդյունքում Կոզակական բրիգադի փոխգնդապետ Ռեզա խանը դարձավ երկրի իրական ղեկավարը: Այստեղ վեր են հանվում նաև իրանական հասարակությունում առկա բևեռացումն ու պայքարը մի կողմից՝ հին վարչակարգի հենարանների (հոգևորականության և ավատատերերի) և մյուս կողմից՝ նոր ձևավորվող բուրժուազիայի ու մտավորականության միջև: Պայքար, որի ընթացքում Ռեզա խանը կարողացավ ստանալ երկու հակադիր կողմերի աջակցությունը: Արդյունքում, 1925թ. դեկտեմբերի 12-ին նա հռչակվեց Իրանի նորընծա շահ՝ ընդունելով Փահլավի գահակալական անունը: Առաջին ենթաբաժնում հիմնավորվում են նաև Ռեզա շահի ներքին քաղաքականության նպատակները, որոնք փոխկապակցված էին. հաստատել կենտրոնական հզոր իշխանություն, Իրանը տանել զարգացման ուղիով, ձեռք բերել անկախություն և հավասար դիրք գրավել մեծ տերությունների կողքին: Այդ նպատակների իրականացմանն ուղղված քաղաքականությունը խարսխված էր երեք հիմնասյուների վրա՝ ազգայնականություն, արդիականացում, զարգացած տնտեսություն, որոնք էլ ուրվագծում էին նրա ներքին քաղաքականության պայմանական փուլերը:

Երկրորդ՝ *«Իրանական բանակը՝ որպես երկրի կենտրոնացման քաղաքականության կարևորագույն երաշխավոր»* ենթաբաժնում մանրամասն վերլուծության են ենթարկվել իրանական բանակի կազմավորման և երկրի կայունացման գործընթացները: Դեռևս ռազմական մախարարի պաշտոնում Ռեզա խանը գիտակցում էր, որ Իրանի ներքաղաքական լարված

մթնոլորտում առաջնային խնդիր էր ելկրում կայունության ապահովումը, որը հնարավոր է միայն հզոր բանակի առկայության պայմաններում: Ռեզա խանի ջանքերով երկրում գործող ռազմական ուժերը, որոնք ստեղծվել էին օտար պետությունների կողմից և հանդիսանում էին նրանց ազդեցության գործիքը (Կոզակական բրիգադը, Հայրավ-պարսկական հրաձգային զորամասը և Ժամդարմերիան), կազմավորվեցին: Դրանց փոխարեն կազմավորվեց Իրանի Ազգային կանոնավոր բանակը, հիմնվեցին Ոստիկանական կորպուս, Անվտանգության զվարդիա: Հիմք դրվեց ռազմածովային և օդային ուժերին, ինչպես նաև՝ ոչ պակաս կարևոր ռազմական արդյունաբերությանը: Կարևորագույն միջոցառումներից էին ռազմական ուսումնական ծրագրի իրականացումը և «Զինապարտության մասին», «Բանակի վերակազմավորման մասին» և բանակի գործունեությունը կարգավորող այլ օրենքները: Այդ քաղաքականության շնորհիվ ստեղծվեց որոշակի արտոնյալ սոցիալական դաս, որը հավատարիմ էր Ռեզա շահին, և իր գահ բարձրանալուց առաջ և հետո հանդես էլ գալիս որպես նրա քաղաքականության հենարան:

Մույն ենթաբաժնի մյուս հատվածը վերաբերում է երկրի կայունացման գործընթացին Նկարագրվող ժամանակաշրջանում Իրանի քաղաքական վիճակը խիստ անկայուն էր: Հյուսիսում՝ Ատրպատական, Գիլյան, Խորասան մահանգներում, ծավալված անջատողական շարժումներն ու հետզհետե բռնկվող՝ ցեղերի կենտրոնախույս ելույթներն էլ ավելի էին վտանգում երկրի մաքողականությունն ու թուլացնում իշխանության ազդեցությունը, որի վերահաստատումն առաջնային խնդիր էր դարձել: 1921-1925թթ., ներդնելով իր և բանակի ողջ ներուժը, Ռեզա խանը կարողացավ ճնշել հյուսիսային մահանգների, ապա քրդական արաբական անջատողական շարժումները: Հնազանդեցվեցին նաև կենտրոնախույս մյուս ցեղերը: Ռազմական հնազանդեցման հետ մեկտեղ կենտրոնական իշխանությունների կողմից իրականացվեցին մի շարք միջոցառումներ ցեղերին մտակցության անցկացնելու ուղղությամբ: Անշուշտ, բանակի պարտականությունների մեջ մտնում էր երկիրն արտաքին վտանգից պաշտպանելը, սակայն այն ի վիճակի չեղավ դիմադրելու Դաշնակիցների կողմից Իրանի գրավմանը 1941թ. օգոստոսին և Ռեզա շահի՝ գահից պարտադրված հրաժարվելուն: Այդուհանդերձ, նորաստեղծ բանակին հաջողվեց պահպանել երկրի տարածքային

ամբողջականությունը և բոլոր անկյուններում հաստատել կենտրոնական կառավարության իշխանությունը, որից հետո էր միայն հնարավոր իրականացնել արդիականացմանն ու զարգացմանն ուղղված բարեփոխումներ:

Առաջին գլխի երրորդ՝ «Պանիրանիզմը՝ որպես Իրանի կենտրոնացման և միասնականության երաշխավոր» ենթաբաժնում քննարկվում են այն միջոցառումները, որոնք Ռեզա շահի կառավարությունը ձեռնարկել էր ուժով հաստատված կայունությունը գաղափարային հարթություն տեղափոխելու և ժողովրդին միասնականության զգացումով տոգորելու ուղղությամբ: Իրանի տարածքային ամբողջականությունը ապահովելուց հետո Ռեզա շահը ձեռնամուխ եղավ բնակչության միասնականությունը երաշխավորելուն ուղղված միջոցառումների իրականացմանը: Իրանի բազմատարր բնակչությունը պառակտված էր ոչ միայն էթնիկ, այլև կրոնական և լեզվական հատկանիշներով, որն էլ ավելի էր մեծացնում պետության մասնատման վտանգը: Որպես բնակչությանը միավորող գործոն՝ Ռեզա շահն ընտրեց պանիրանիզմը՝ նպատակ ունենալով շեղել հասարակության ուշադրությունը պառակտող էթնիկական, կրոնական, լեզվական առանձնահատկություններից, կենտրոնացնելով այն միավորող ազգայնական գաղափարի շուրջ: Անշուշտ, դա բացասաբար էր անդրադառնում էթնիկ և ազգային միավորումների կյանքում՝ զրկելով վերջիններիս ազատ ինքնորոշման իրավունքից: Թեև Ռեզա շահի քաղաքականության արդյունքում փոխվեցին բնակչության կենսաձևն ու արտաքին առանձնահատկությունները, այդուհանդերձ, միասնական իրանական ազգի գաղափարն այդպես էլ չյուրացվեց Իրանի բազմազգ հասարակության կողմից և չդարձավ այն գործոնը, որն, ըստ Ռեզա շահի Փահլավիի, պետք է նպաստեր Իրանի կայացմանն ու հզորացմանը:

Չորրորդ ենթաբաժինը կրում է «Ռեզա շահի Փահլավիի բռնապետության ազդեցությունը Իրանի պետական և հասարակական կյանքում» վերնագիրը: Այստեղ քննության են ենթարկվում Ռեզա շահի Փահլավիի քաղաքականության իրականացման մեթոդները և դրանց հետևանքները երկրի պետական և հասարակական կյանքում: Ռեզա շահն իշխանության եկավ Իրանի համար չափազանց լարված մթնոլորտում, երբ երկիրը պառակտված էր ներքին անջատողական ուժերի և արտաքին ազդեցությամբ, որով էլ, կարծում ենք, պայմանավորված էր նրա կառավարման

բռնապետական բնույթը: Տարիների ընթացքում նա բացարձակ վերահսկողություն հաստատեց պետական կառավարման օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների նկատմամբ: Նույն միտումները նկատելի էին նաև երկրի հասարակական կյանքում, որն արտահայտվում էր ոչ միայն առկա ընդդիմությունը վերացնելով, այլև՝ հնարավորը կանխելով: Ռեզա շահի քաղաքականությունն, անշուշտ, կրում էր միապետականություն բնույթ և իրականացվում էր բռնապետական, անհանդուրժողական մեթոդներով: Մակայն, կարծում ենք, անժխտելի փաստ է, որ Ռեզա շահը ազգայնական գործիչ էր, ում հիմնական սկզբունքն ու գլխավոր նպատակն էր երկիրը ծանր կացությունից հանելն ու զարգացման ուղիով տանելն էր: Նպատակ, որը թեև արդարացնում, սակայն բացատրում է նրա գործելակերպը:

Ատենախոսության երկրորդ՝ «ԻՐԱՆԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆ ՈՒ ԴՐՈՒՄՆԵՐԸ» վերնագիրը շարունակում է երկրի ներքին կյանքի սոցիալական ոլորտին և բաղկացած է չորս ենթաբաժնի: Իրականացնելով իր քաղաքականության առաջնային կարևորության նպատակը՝ կենտրոնացնելով իշխանությունը և կայունություն հաստատելով երկրում, Ռեզա շահը անխաղաղ կյանքի ստեղծեց հետագա զարգացման համար, որը հնարավոր էր արդիականացման միջոցով: Նրա պատկերացմամբ՝ Իրանի արդիականացումը պետք է իրականացվեր արևմտյան քաղաքակրթության նվաճումները յուրացնելով, սակայն, միևնույն ժամանակ, զերծ մնալով նրանցից նյութական կամ որևէ այլ տեսակի կախվածությունից: Ռեզա շահի կարծիքով՝ ազգայնական ճանապարհին առկա էր կարևորագույն երեք խոչընդոտ՝ բնակչության անգրագիտությունը, ժամանակի պահանջներին չհամապատասխանող դատաիրավական համակարգը և հասարակությունից մեկուսացված՝ կանանց կարգավիճակը: Ուստի նշված ոլորտները բարելավվում սոսկ ինքնանպատակ չէր, այլ հոգևորականության ազդեցությունը թուլացնելով ինչպես նաև Իրանի միջազգային վարկի և հեղինակության վերածնունդը խթանելու լավագույն միջոց:

Առաջին՝ «Կրթական ոլորտի բարեփոխումները» ենթաբաժինը վերաբերում բնակչության, թեևս, առավել կարևոր և կենսական ոլորտին՝ կրթությանը, որին անդրադարձավ բարեփոխումների առաջին ալիքը:

19-րդ դարում Իրանի կրթական համակարգն ամբողջությամբ դարձել էր հոգևորականության մենաշնորհը: Տարրական դպրոցները՝ մաքթաբները, գտնվում էին հոգևորականության ազդեցության ներքո: Բարձրագույն կրթության միակ օջախներն էին հոգևոր դպրոցները՝ մեդրեսեները: Թեև 20-րդ դարի սկզբին կրթության բարելավման ուղղությամբ քայլեր իրականացվել էին, այնուամենայնիվ, Ռեզա շահի կառավարության շրջանում էր, որ հիմք դրվեց Իրանի պետական կրթության աշխարհիկ համակարգին՝ տարրական, միջնակարգ և բարձրագույն մակարդակներով: Աշխարհիկ ուսուցիչների պակասը լրացնելու նպատակով առաջին հերթին քայլեր ձեռնարկվեցին Շվիտպա տարեկան 100 երիտասարդի ուսումնառության ուղարկելու ուղղությամբ: Դրան հետևեց Իրանում մանկավարժական քոլեջների և, ի վերջո, Պետական համալսարանի բացումը, որն իր էության մեջ ամնախաղեպ երևույթ էր երկրում: Կարևոր քայլ էր կանանց կրթություն ստանալու հնարավորություն ընձեռելը: Կրթական բարեփոխումների շրջանակներում կարևորագույն միջոցառումներից էր մեծահասակների կրթության գործընթացը, որն իրականացվում էր անվճար հիմունքներով:

Սակայն, նոր համակարգն ուներ իր թերություններն ու բացթողումները՝ թե՛ ծրագրերի մշակման և թե՛ իրականացման գործընթացում: Իրանի կրթական նոր համակարգը ձևավորվել էր ֆրանսիական օրինակի զգալի ազդեցությամբ և չէր համապատասխանում երկրի ավանդույթներին ու պատմական իրականությանը: Հաջորդ թերությունն այն էր, որ բարեփոխումներն իրականացվում էին հիմնականում մայրաքաղաքում և խոշոր քաղաքներում, որտեղ արևմուտքի ազդեցությունը զգալի էր:

Այդուհանդերձ, ժամանակակից կրթական համակարգը մոր շրջան ազդարարեց իրանական հասարակության կրթական ոլորտում և հզոր խթան հանդիսացավ երկրի արդիականացման և առաջընթացի համար: Բացի այդ, Ռեզա շահի կրթական քաղաքականությունն ունեցավ ևս երկու դրական ազդեցություն. կրթությունը դադարեց լինել հոգևորականության մենաշնորհը, որը թուլացրեց վերջիններիս ազդեցությունը և հիմք դրեց կանանց կարգավիճակի բարելավմանը և սոցիալական էմանսիպացմանը:

Երկրորդ՝ «Դատախիրավական և վարչական բարեփոխումների գործընթացն **հետևանքները**» ենթաբաժնում համգամանորեն ներկայացվել և վերլուծության են ենթարկվել դատախիրավական և վարչական ոլորտներում իրականացված բարեփոխումները:

Դատախիրավական համակարգի բարելավումը կարևոր էր ոչ միայն ներքին կյանքի կարգավորելու, այլև Իրանի արտաքին հարաբերությունները նոր հարթության վրա դնելու համար: Իրանական կառավարության առաջարկությամբ և Մեջլիսի հավանությամբ՝ առաջին հերթին ընդունվեցին եվրոպական աշխարհիկ իրավական նորմերին համապատասխան քաղաքացիական և քրեական օրենսգրքեր: Ձևավորվեց աշխարհիկ տիպի դատական համակարգ. ստեղծվեցին ընդհանուր (առաջին ատյանի և բողոքարկման) և հատուկ (միջոցառումներ, շարիաթի, վարչական և ռազմական) դատարաններ, դատախազություններ, շարիաթական գրասենյակներ, հիմնվեց հավատարմատարական և փաստաբանական ինստիտուտը, կառուցվեցին բանտեր: Արդիականացվեց երկրի վարչական ապարատը:

Անշուշտ, բարեկիստումները գերծ չէին թերություններից և բացթողումներից: Երկու շարունակվում էին խորը ավանդույթներ ունեցող կաշառակերությունը, զանազազողությունը կոռուպցիան: Կառավարությունը գտնում էր լծակներ նորաստեղծ դատախիզական վարչական համակարգերը ևս իր ազդեցությանը ենթարկելու համար, իսկ նոր օրենքները դեռ լիարժեք չէին, և իրենցից ներկայացնում էին արևմտյան մոդելների և Շարիաթի խառնուրդ: Այդուհանդերձ, այդ միջոցառումները կարելի է որակել որպես դրական երևույթ, որի արդյունքում հնարավոր դարձավ վերացնել Կապիտուլյացիոն համակարգը և նոր աստիճանի վրա դնել Իրանի հարաբերություններն այլ պետությունների հետ: Դա էլ նպաստեց կենտրոնական կառավարության դիրքերի և երկրում կայունության ամրապնդմանն ու իրավական պետության հաստատմանը:

Երկրորդ գլխի երրորդ ենթաբաժինը կրում է *«Կանանց կարգավիճակի բարելավումը* խորագիրը: Ռեզա շահի կարծիքով՝ Իրանի կանանց կախյալ վիճակը երկրի արդիականացն կարևորագույն խոչընդոտներից էր: Կանանց վիճակը բարելավելու՝ Ռեզա շահի ծրագր. հետապնդում էր առնվազն երեք միլիանց փոխկապակցված առաջնահերթ նպատ. արևմտականացնել Իրանը, թուլացնել հոգևորականության ազդեցությունը, օգտագոր.

կանանց ներուժը երկրի զարգացման ու առաջադիմության գործընթացում: Այդ ուղղությամբ իրականացված միջոցառումներից առաջինը, և, թերևս, ամենակարևորը կանանց կրթության և աշխատանքի իրավունք ընձեռելն էր: Բարեփոխումների ծրագրի հաջորդ թիրախը չադրան (*hijab*) էր, որն Իրանի կանանց կախյալ վիճակի չափանիշն էր: Կանանց վիճակի բարելավման ուղղությամբ բարեփոխումներ իրականացվեցին նաև ընտանեկան հարաբերությունները կարգավորող իրավական ոլորտում, որոնք, սակայն, իրենցից առավելապես ներկայացնում էին ավանդապաշտության և արդիականության խառնուրդ: Իրավական, կրթական և սոցիալական այլ բարեփոխումները բարելավեցին կանանց վիճակը: Իրանի կանայք ոգեշնչված էին իրենց օրինական ազատությամբ և ժամանակակից կրթության շնորհիվ ներքաշվում էին երկրի կյանքի մեջ: Սակայն այդ երևույթը չէր կրում զանգվածային բնույթ և առավելապես նկատելի էր քաղաքային մտավորական, բյուրոկրատական և մասնագիտական այլ խավերի շրջանում:

Ատենախոսության երկրորդ գլխի վերջին՝ չորրորդ ենթաբաժինը վերնագրված է *«Իրանի արդիականացման հետևանքները հոգևորականության համար»*, որտեղ ներկայացվում է Ռեզա շահի կառավարման շրջանում՝ Իրանի առաջընթացին ուղղված միջոցառումների հանրագումարը: Հարկ է նշել, որ հոգևորականության աջակցությամբ իր դիրքերն ու երկրի կայունությունն ապահովելուց հետո Ռեզա շահը ձեռնամուխ եղավ երկրի արդիականացման ու արևմտականացման գործընթացին: Իրանի պարագայում արդիականացումն անխուսափելիորեն ենթադրում էր աշխարհիկացում և, հետևաբար, հոգևորականության դիրքի թուլացում: Ռեզա շահի վարած ազգայնական քաղաքականությունը, որը հիմնված էր նախախլամական Իրանի փառաբանման և զրադաշտական կրոնի վերածննդի գաղափարի վրա, կրում էր նաև ժողովրդի շրջանում իսլամն օտարացնելու և հոգևորականության ազդեցությունը թուլացնելու միտում: Այդ ուղղությամբ իրականացված միջոցառումների առաջին ալիքի արդյունքն աշխարհիկ տիպի կրթական համակարգի հիմնադրումն ու կանանց կարգավիճակի բարելավումն էր: Դատախարակական բարեփոխումների արդյունքում, որոնք ընթանում էին երկրի ընդհանուր արդիականացման և աշխարհիկացման շրջանակներում և միտված էին Շարիաթի օրենքները եվրոպական իրավունքի մոդերնով փոխարինելուն, հոգևորականությունը կորցրեց դատախարակական հարաբերությունները կարգավորելու՝ իր

մենաշնորհը: Ռեզա շահի քաղաքականությունը հետապնդում էր հոգևորականության ոչ միայն գաղափարային, հասարակական, այլև ֆինանսական դիրքերը թուլացնելու նպատակ, որն ուղղությամբ կատարված քայլերից էր նաև նվիրատվությունների միջոցով կուտակված մզկիթապատկան հարստությունների (*վակուֆների*) բռնագրավումը: Իսկ հոգևորականության բացասական վերաբերմունքն արտահայտվում էր հիմնականում «զուտ ընդդիմությամբ»:

Արդիականացման արդյունքում հասարակության բևեռացումը նոր պատկեր ստացավ բանակը, մասնագիտական միջին խավը, առևտրաարդյունաբերական բարձր և միջին խավը, կողմ էին արդիականացմանը, իսկ ավատատերերը, առևտրային ցածր խավը, գյուղացիները, հոգևորականության՝ այսինքն ավանդապաշտության կողմնակիցներն էին: Այդ ամենը հանդերձ, կարծում ենք, Իրանի արդիականացման գործընթացը Ռեզա շահ Փահլավի կառավարման շրջանում ընդհանուր առմամբ դրական երևույթ էր: Եթե Փահլավիները դինաստիայի հիմնադրումը նոր փուլ նշանավորեց Իրանի համար որպես պետություն, ապա արդիականացումը նույն դերը խաղաց երկրի բնակչության համար:

Ատենախոսության երրորդ՝ *«ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ ՈՂՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ ՌԵՋԱ ՇԱՀ ՓԱՀԼԱՎԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄԸ»* գլխում ներկայացված են Ռեզա շահի կառավարության տնտեսական բարեփոխումները ուղղությունները, իրականացման եղանակներն ու արդյունքները: Այն բաղկացած է հիմնական ենթաբաժնից, որոնցից առաջինը կրում է *«Ֆինանսական ոլորտի բարեփոխումները»* խորագիրը: Ռեզա շահ Փահլավի ֆինանսատնտեսական քաղաքականությունն ուներ որոշակի սկզբունքայնություն, որը ձևավորվել էր տարիների ընթացքում: Առաջինը կրում էր պետականակենտրոն բնույթ (պետական կապիտալիզմի՝ էթատիզմի, քաղաքականությունը որն արտահայտվում էր ֆինանսատնտեսական բոլոր բնագավառներում և իրականացվում էր միայն պետական վերահսկողությամբ ֆինանսատնտեսական գործընթացների նկատմամբ, այն պետության անմիջական մասնակցությամբ: Երկրորդը՝ տնտեսական բարեփոխումները իրականացումն էր առավելապես երկրի ներքին ռեսուրսների հաշվին, որի նպատակը ոչ միայն տնտեսության զարգացումն էր, այլև արտաքին ֆինանսական կախվածությունից ազատվելը: Դեռևս 1930թ. Մեջլիսի 8-րդ՝ այսպես կոչված «Տնտեսական խորհրդարան»-ի բացման

ժամանակ Ռեզա շահը ճշել էր. «Գոյություն ունեն կարճաժամկետ և երկարաժամկետ բարեփոխումներ, որոնք կհանգեցնեն երկրի տնտեսության արմատական բարելավման: Կարճաժամկետ բարեփոխումները կարող են իրագործվել ազգային բյուջեի խնայողությունների հաշվին: Իսկ երկարաժամկետ՝ առավել լայնածավալ բարեփոխումների համար անհրաժեշտ է ներգրավել արտաքին փոխառություններ»²⁷: Սակայն, ինչպես ցույց տվեց ժամանակը, Իրանի կառավարությանը այդպես էլ չհաջողվեց երկրի համար նպաստավոր պայմաններով կապիտալներ ներգրավել: Ուստի խոշոր ծրագրերը ևս իրագործվում էին ներքին ռեսուրսների հաշվին, որն էլ ավելի էր բարդացնում երկրի առջև ծառացած խնդիրները:

Նշված սկզբունքների համալիր կիրառման արդյունքում Իրանում առաջին հերթին ձևավորվեց պետական բյուջե՝ համակարգված եկամուտներով և ծախսերով, հիմնվեց Իրանի Ազգային պետական բանկը, որը ցանկացած երկրի համար ֆինանսական անկախության կարևորագույն գործոն է, Իրանի ֆինանսական համակարգը դրվեց իրավական հարթության վրա: 1928թ. Կապիտուլյացիոն համակարգի վերացումից հետո Իրանը ձեռք բերեց մաքսային անկախություն՝ չնայած զիջումների գնով: Քննարկվող ժամանակաշրջանում իրականացված ֆինանսական բարեփոխումները կրում էին թռիչքաձև բնույթ ու ընթացք և զերծ չէին բացթողումներից: Այդ ամենով հանդերձ՝ պետք է հաշվի առնել, որ Ռեզա շահի վարած քաղաքականության արդյունքում Իրանն առժամանակ ազատվեց արտաքին ֆինանսական կախվածությունից, որն էլ նախադրյալներ ստեղծեց ինչպես երկրի ներքին անվտանգության պահպանման և տնտեսության զարգացման, այնպես էլ՝ Իրանի միջազգային վարկի բարձրացման համար:

Երրորդ գլխի երկրորդ՝ «Արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը», ենթաբաժնում ներկայացվում են Ռեզա շահի կառավարության իրականացրած բարեփոխումներն արդյունաբերության և գյուղատնտեսության բնագավառներում: Մինչև Ռեզա շահ Փաիլավիի կառավարման շրջանը Իրանի տնտեսությունը կրում էր գյուղատնտեսական բնույթ: Սակայն Ռեզա շահի օրոք, ելնելով ներքին կարիքներից, ինչպես նաև դարի միտումներին համահունչ, տնտեսական ծրագրերի հիմնական շեշտը դրվեց արդյունաբերության զարգացման վրա, որն

²⁷Wilber D., Riza Shah Pahlavi: The Resurrection and Reconstruction of Iran (1878-1944), New York, 1975, p. 141, p.264

իրականացվում էր պետական կապիտալիզմի սկզբունքով: Այն դեռևս սաղմնային վիճակում գտնվող ազգային արդյունաբերության զարգացման գործընթացում ուներ առնվազն եռակի բնույթ. պետությունը հանդես էր գալիս որպես արդյունաբերական գործընթացները կարգավորող և վերահսկող գործոն: Երկրորդը՝ պետությունը հանդես էր գալիս որպես ներդրող, և երրորդը՝ իրականացնում էր ազգային կապիտալի հանդեպ պրոտեկցիոնիստական քաղաքականություն: Դրա շնորհիվ հիմք դրվեց իրանական ազգային արդյունաբերությանը, ստեղծվեց հզոր պետական սեկտոր, որը դարձավ Իրանի տնտեսական զարգացման խոշորագույն գործոն: Գործարանային արդյունաբերության զարգացումն էլ իր հերթին հնարավորություն էր ընձեռում ֆեոդալականից բուրժուական հարաբերություններին անցում կատարելու՝ պետական կապիտալիզմի ուղու վրա կանգնելու համար:

Գյուղատնտեսության ոլորտում կառավարությունն առավելապես ուշադրություն է դարձնում գյուղատնտեսական մեթոդների բարելավմանը՝ հետին պլան մղելով ագրարային հարաբերությունները: Այդուհանդերձ, կարծում ենք, Ռեզա շահի տնտեսության զարգացման ծրագրի անժխտելի առավելությունն արդյունաբերության և գյուղատնտեսության փոխկապված և համապատասխանեցված զարգացումն էր:

Ատենախոսության երրորդ գլխի երրորդ՝ «Առևտուրը» խորագրով ենթաբաժնում հանգամանորեն ներկայացվում և վերլուծության են ենթարկվում քննարկված ժամանակաշրջանում իրականացված միջոցառումներն Իրանի ներքին և արտաքին առևտրի զարգացման ուղղությամբ: 20-րդ դարի սկզբին Իրանն արտաքին առևտրի բնագավառում հանդես էր գալիս որպես լայն սպառման արդյունաբերական ապրանքներ ներմուծող փոխարենը՝ առավելապես գյուղատնտեսական հումք արտահանող երկիր: Առևտրի բնագավառում ևս, ինչպես և տնտեսական այլ ծրագրերում, կիրառվում էր պետական կապիտալիզմի սկզբունքը: Այստեղ այն դրսևորվեց «Արտաքին առևտրի պետական մենաշնորհի» սահմանումով: Վերջինիս կիրառումը հնարավորություն ընձեռեց՝ առևտրային հարաբերություններն այլ պետությունների հետ դնել իրավահավասարության, հավասարակշռության, առևտրի հարթության վրա, որի արդյունքում նվազեց Իրանի արտաքին առևտրում երկրի տարիներ գերակայող բացասական հաշվեկշռի ինդեքսը: Այդ քաղաքականությունը կոչված

նաև զարգացնելու ազգային արդյունաբերությունը՝ պրոտեկցիոնիստական միջոց հանդիսանալով ազգային արտադրանքի համար: Ինչպես տեսնում ենք, Ռեզա շահի կառավարման շրջանում տնտեսության բարելավման ծրագիրը խարսխված էր տնտեսության ճյուղերը միմյանց կապելու և զարգացնելու սկզբունքի վրա:

Չորրորդ՝ «Տրանսպորտը և հեռահաղորդակցությունը» ենթաբաժնում ներկայացվում են տվյալ ոլորտում իրականացված բարեփոխումները և տրանսպորտային շինարարության հիմնական ուղղությունները, ինչպես նաև վերլուծության են ենթարկվում նաև դրանց ընտրության պատճառներն ու հետևանքները: Տրանսպորտային շինարարության բնագավառում Ռեզա շահ Փահլավիի կառավարությունը առաջնորդվում էր վերոնշյալ՝ պետական կապիտալիզմի սկզբունքով՝ հանդես գալով որպես մախաձեռնող, իրականացնող և վերահսկող: Նման քաղաքականության արդյունքում ստեղծվեց ճանապարհային համակարգ, որը 1920-30-ական թթ. իրականացված շինարարական կարևորագույն նվաճումներից էր: Այն մեծապես նպաստեց կառավարության՝ կենտրոնացման քաղաքականության հաջողությանը, նաև մախաղոյալներ ապահովեց տնտեսական հետագա առաջընթացի համար: Երկիրը հատում էին խոշոր մայրուղիներ, որոնք միանում էին Թեհրանում, որի շնորհիվ մայրաքաղաքը կապվում էր սահմանակից պետություններին և հեռավոր նահանգներին: Հիմք դրվեց նաև օդային հաղորդակցությանը, ինչպես նաև իրանական կառավարության վերահսկողությանն անցավ ռազմավարական մեծ նշանակություն ունեցող՝ հեռագրային կապը: Տրանսպորտային շինարարության բնագավառում առավել մեծ նշանակություն ուներ Տրանսիրանական երկաթուղու կառուցումը, որի հիմնական մախաձեռնողն ու գաղափարակիրը Ռեզա շահն էր: «Տրանսիրանական երկաթուղու կառուցման մասին» օրենքն ընդունվել էր Մեջլիսի կողմից 1926թ. փետրվարի 9-ին: Երկաթգծի կառուցման հիմնական աղբյուրը 1925/1926թ. ընդունված՝ քեյի և շաբարի ներմուծման մեմաշնորհային տուրքերն էին:

Տրանսիրանական երկաթուղին, որի երկարությունը կազմում էր 1394 կմ, միացնում էր երկրի հյուսիսը հարավին, մի կողմից՝ ապահովելով կենտրոնական իշխանության վերահսկողությունը հեռավոր նահանգների հանդեպ, իսկ մյուս կողմից՝ պայմաններ ստեղծելով

հյուսիսային արտադրանքը հարավային նավահանգիստներից համաշխարհային շուկա արտահանելու համար:

Արդյունքում, ստեղծվեց հաղորդակցության միասնական կոռ ցանց, որը ներառում ռազմավարական մեծ նշանակություն ունեցող տրանսպորտային և հեռահաղորդակցության համակարգերը, որի շնորհիվ հնարավոր դարձավ առաջին հերթին հաստատել կենտրոնական իշխանության վերահսկողությունը բոլոր նահանգների հանդեպ և ապահովել առաջնության նպաստավոր պայմաններ առևտրի համար:

Ատենախոսության վերջին ենթագլուխը կրում է «Բնական պաշարների շահագործումը և խորագիրը և վերաբերում է առավելապես իրանական նավթի խնդրին և 1932/33թ. պայթյունավտանգ իրավիճակին:

Իրանի տարածքը հարուստ է օգտակար հանածոներով, որոնցից, թերևս, առավել մեծ արժեք է ներկայացնում նավթը: 20-րդ դարի սկզբից Իրանի՝ նավթով հարուստ հարավային նահանգներում «սև ոսկու» շահագործումը բրիտանահպատակ գործարար դ՝ Արսիին շնորհված իսկ հետագայում բրիտանական կառավարությանն անցած կոնցեսիայի հիման վրա դարձել Անգլո-իրանական նավթային ընկերության (ԱԻՆԸ), ավելի ստույգ՝ Մեծ Բրիտանիայի մեմաշնորհը: 1908-1933թթ. ընթացքում իրանական նավթի իրացումից ստացված՝ ԱԻՆԸ մաքուր եկամուտը կազմում էր 171 մլն ֆունտ ստեռլինգ, որի 6.35%-ն էր հատկացվել Իրանի համաձայնագրով հաստատված 16%-ի փոխարեն: Դեռևս իր գահակալության առաջին տարիներին Ռեզա շահ Փահլավին պայքար էր սկսել այդ նավթային մեմաշնորհատերի դեմ, որ իր հանգուցալուծումը ստացավ 1933թ. նոր պայմանագրի կնքումով: Թեև պայմանագրի չփոխվեց Իրանի կարգավիճակը նավթի շահագործման գործընթացում, սակայն որոշ չափով ալվելացավ Իրանի մասնաբաժինը նավթից ստացվող եկամուտներից: Բացի այդ, պետք է հաշվառենք այն հանգամանքը, որ Իրանը դեռևս չուներ այն տնտեսական, քաղաքական հզորություն և միջազգային վարկը, որպեսզի միայնակ կարողանար պայքարել Մեծ Բրիտանիայի դեմ Ուստի այն, որ այդ հարցը դրվել էր միջազգային հանրության քննարկմանը, և դեռևս 15 տարի առաջ Մեծ Բրիտանիայից կախվածության մեջ գտնվող Իրանը դեմ էր գնացել այդ գերիշխող տերությանը, արդեն մեծ նշանակություն ուներ:

Երրորդ գլխի հինգերորդ ենթաբաժնի վերջում քննության են առնված Ռեզա շահի կառավարության ձախողման պատճառներն ու մեծ տերությունների՝ Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի դերակատարություններն այդ գործընթացում: Երբ 1939թ. սկսվեց II Համաշխարհային պատերազմը, Իրանի դիրքերն էլ ավելի խարխիվեցին, իսկ աշխարհագրական դերը՝ մեծացավ: Պատերազմող երկու կողմերն էլ փորձում էին օգտագործել Իրանի տարածքը սեփական շահերից ելնելով: Գլխակցելով իրավիճակի բարդությունը՝ Ռեզա շահ Փահլավին 1941թ. սեպտեմբերի 16-ին հրաժարվեց իրանական գահից հոգուտ իր որդու՝ Մոհամմադ Ռեզա Փահլավիի:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ամփոփվում են ատենախոսության մեջ առաջ քաշված հիմնախնդիրները և ներկայացվում ստորև շարադրված՝ հիմնական եզրահանգումները:

- 1921թ. փետրվարին Իրանում տեղի ունեցավ հեղաշրջում, որի իրական նախաձեռնողը Մեծ Բրիտանիան էր: Սակայն արդյունքում իշխանության գլուխ եկավ Կոզակական բրիգադի փոխգնդապետ՝ մինչ այդ քաղաքական շրջանակներում անհայտ, Ռեզա խանը, ով ընդամենը չորս տարի անց դարձավ Փահլավիների գահակալական դինաստիայի հիմնադիրը և նոր՝ շրջադարձային փուլ ազդարարեց Իրանի համար:
- Ռեզա խանի ջանքերով կազմավորվեց Իրանի Ազգային կանոնավոր բանակը, հիմնվեցին Ոստիկանական կորպուս, Անվտանգության գվարդիա: Նորաստեղծ բանակին հաջողվեց պահպանել երկրի տարածքային ամբողջականությունը և բոլոր անկյուններում հաստատել կենտրոնական կառավարության իշխանությունը, որից հետո էր միայն հնարավոր իրականացնել արդիականացմանն ու զարգացմանն ուղղված բարեփոխումներ:
- Իրանի բազմատարր բնակչությունը պառակտված էր ոչ միայն էթնիկ, այլև կրոնական և լեզվական հատկանիշներով, որն էլ ավելի էր մեծացնում պետության մասնատման վտանգը: Որպես բնակչությանը միավորող գործոն՝ Ռեզա շահն ընտրեց պանիրանիզմի՝ միասնական իրանական ազգի գաղափարը, որը, սակայն, այդպես էլ չյուրացվեց Իրանի բազմազգ հասարակության կողմից և չդարձավ այն գործոնը, որն, ըստ Ռեզա շահ Փահլավիի, պետք է նպաստեր Իրանի կայացմանն ու հզորացմանը:

- Իր կառավարման տարիների ընթացքում Ռեզա շահ Փահլավին բացարձակ վերահսկողություն հաստատեց պետական կառավարման օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների հանդեպ: Ռեզա շահի քաղաքականությունն, անշուշտ, կրում է միապետականություն բնույթ և իրականացվում էր բռնապետական, անհանդուրժողական մեթոդներով: Սակայն, անժխտելի փաստ է այն, որ Ռեզա շահն ազգայնական գործիչ էր, ով հիմնական սկզբունքն ու գլխավոր նպատակը երկիրը ծանր կացությունից հանելն զարգացման ուղիով տանելն էր:
- Սոցիալական ոլորտի բարեփոխումներն իրականացվում էին արդիականացման ճանապարհով, որը ենթադրում էր արևմտականացում և աշխարհիկացում, հետևաբար հոգևորականության դիրքի թուլացում: Բարեփոխումների առաջին ալիքը վերաբերում էր կրթությանը: Ռեզա շահի կառավարման շրջանում հիմք դրվեց Իրանի պետական կրթության աշխարհիկ համակարգին՝ տարրական, միջնակարգ և բարձրագույն մակարդակներով: Չնայած թերություններին և բացթողումներին՝ ժամանակակից կրթական համակարգը նախաձեռնվեց շրջան ազդարարեց իրանական հասարակության կրթական ոլորտում և հզոր խթան հանդիսացավ երկրի արդիականացման և առաջընթացի համար:
- Բարեփոխումների հաջորդ փուլը վերաբերում էր դատախիզական համակարգին, որը կարևոր էր ոչ միայն ներքին կյանքը կարգավորելու, այլև Իրանի արտաքին հարաբերությունները նոր հարթության վրա դնելու համար: Առաջին հերթին ստեղծվեց ինքնուրույն եվրոպական նորմերին համապատասխան օրենսգրքեր, ձևավորվեց աշխարհիկ տիպի դատական համակարգ, արդիականացվեց երկրի վարչական ապարատը: Այս միջոցառումների արդյունքում հնարավոր դարձավ վերացնել Կապիտուլյացիոն համակարգը և նոր աստիճանի վրա դնել Իրանի հարաբերություններն այլ պետությունների հետ: Հենց դրանով էլ նպաստեց կենտրոնական կառավարության դիրքերի և երկրում կայունության ամրապնդմանն ու իրավական պետության հաստատմանը:
- Ռեզա շահի կարծիքով՝ Իրանի առաջընթացի ճանապարհին առկա խոչընդոտներից էին Իրանի կանանց կախյալ վիճակը: Ուստի կանանց վիճակը բարելավելու՝ Ռեզա շահն օգտագործեց իր անհատական ջանքերը և առնվազն երեք միլիոն փոխկապակցված առաջնահերթ

նպատակ՝ արևմտականացնել Իրանը, թուլացնել հոգևորականության ազդեցությունը, օգտագործել կանանց ներուժը երկրի զարգացման ու առաջադիմության գործընթացում: Իրավական, կրթական և սոցիալական այլ բարեփոխումները բարելավեցին կանանց վիճակը և հնարավորություն տվեցին նրանց՝ մասնակցելու երկրի կյանքին:

- Իրանում իրականացվող արդիականացման քաղաքականությունն անխուսափելիորեն ենթադրում էր աշխարհիկացում և հետևաբար հոգևորականության դիրքի թուլացում: Աշխարհիկ կրթական, ինչպես նաև դատաիրավական համակարգերի հիմնադրման արդյունքում հոգևորականությունը կորցրեց տվյալ ոլորտներում իր մենաշնորհային դիրքերը: Չնայած առկա թերություններին, Իրանի արդիականացման գործընթացը Ռեզա շահ Փահլավիի կառավարման շրջանում աննախադեպ երևույթ էր, որը նոր փուլ նշանավորեց Իրանի համար՝ որպես պետություն:
- Ռեզա շահ Փահլավիի ֆինանսատնտեսական քաղաքականությունը հիմնված էր պետական կապիտալիզմի սկզբունքի վրա, որն արտահայտվում էր ֆինանսատնտեսական բոլոր բնագավառներում: Տնտեսական բարեփոխումներն իրականացվում էին առավելապես երկրի ներքին ռեսուրսների հաշվին: Նշված սկզբունքների համալիր կիրառումը հնարավորություն ընձեռեց համակարգել և իրավական հարթության վրա դնել Իրանի ֆինանսական համակարգը, որի շնորհիվ երկիրն առժամանակ ազատվեց արտաքին ֆինանսական կախվածությունից, որն էլ նախադրյալներ էր ստեղծում ինչպես երկրի ներքին անվտանգության պահպանման և տնտեսության զարգացման, այնպես էլ՝ Իրանի միջազգային վարկի բարձրացման համար:
- Տնտեսական ծրագրերն իրականացվում էին պետական կապիտալիզմի սկզբունքով, որի շնորհիվ հիմք դրվեց իրանական ազգային արդյունաբերությանը:
- Առևտրային հարաբերություններն այլ պետությունների հետ դրվեցին իրավահավասարության, հավասարակշիռ առևտրի հարթության վրա, որի արդյունքում նվազեց Իրանի արտաքին առևտրում երկար տարիներ գերակայող բացասական հաշվեկշռի ինդեքսը:

- Գյուղատնտեսության ոլորտում կառավարությունն առավելապես ուշադրություն դարձնում գյուղատնտեսական մեթոդների բարելավմանը՝ հետին պլան մղելով ագրարային հարաբերությունները: Այդուհանդերձ, կարծում ենք, Ռեզա շահի տնտեսության զարգացման ծրագրի անժխտելի առավելությունն արդյունաբերության և գյուղատնտեսության փոխկապված և համապատասխանեցված զարգացումն էր:
- Կառավարության վերահսկողությամբ ստեղծվեց հաղորդակցման միասնական կոուցալդորը ներառում էր ռազմավարական մեծ նշանակություն ունեցող տրանսպորտային հեռահաղորդակցության համակարգերը, որի շնորհիվ առաջին հերթին հնարավոր դարձավ հաստատել կենտրոնական իշխանության վերահսկողությունը բոլոր նահանգների հանդեպ ապահովել առևտրային գործունեության առավել նպաստավոր պայմաններ:
- Թեև քննվող ժամանակաշրջանում ֆինանսատնտեսական բարեփոխումները կրում էին թռիչքաձև բնույթ և զերծ չէին բացթողումներից, այնուամենայնիվ պետք է նկատի ունենալ, որ բոլոր տնտեսական ծրագրերն իրականացվում էին ներքին ռեսուրսների հաշվին, որն ավելի էր բարդացնում երկրի առջև ծառացած խնդիրները և պայմանավորում տնտեսության զարգացման ուղղություններն ու մեթոդները: Երկրի ներքին քաղաքական զարգացումներից և տնտեսական նախադրյալներից զատ, պետք է հաշվի առնել նաև միջազգային դրությունն այդ շրջանում: Առաջին համաշխարհային պատերազմի և Իրանի շուրջ ծավալված իրադարձությունների հետևանքներն, ինչպես նաև 1929-1933 թվականների համաշխարհային տնտեսական ճգնաժամը, իրենց բացասական հետքը բողբոջեցին տնտեսության վրա, որն այդ շրջանում դեռևս մոր էր սկսում ոտքի կանգնել՝ թեկուզ վերականգնված պարտադրված միջոցառումների, այլ ոչ բնականոն զարգացման արդյունքում:
- Չնայած բազմաթիվ թերություններին և բացասական հետևանքներին, այն, ինչ Ռեզա շահ Փահլավին արեց իր երկրի ազատագրման, կայունացման և առաջընթացի համար, մեծադույն նվաճում էր տասնամյակների կախյալ և ինքնուրույն վիճակից հետո: Նա ստեղծեց նախադրյալներ երբեմնի հզոր Իրանի վերածննդի համար. վերածնունդ, որն ավանատեսներն ենք մենք այսօր:

1. Կրթական բարեփոխումները Ռեզա շահ Փահլավիի կառավարման շրջանում, Մերձավոր Արևելք. Պատմություն, քաղաքականություն, մշակույթ (հոդվածների ժողովածու), Երևան, 2002, էջ 134-147:
2. Կանանց վիճակը Ռեզա շահ Փահլավիի կառավարման շրջանում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXII, Երևան, 2003, էջ 145-156:
3. Իրանական բանակը՝ որպես երկրի կենտրոնացման քաղաքականության կարևորագույն երաշխիք XX դարի առաջին կեսին, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXIII, Երևան, 2004, էջ 277-289:
4. Արդիականացման գործընթացն Իրանում 20-րդ դարի 20-40-ական թթ. և դրա հետևանքները հոգևորականության համար, Մերձավոր Արևելք, Երևան, 2006, էջ 119-124:
5. Դատաիրական բարեփոխումների ազդեցությունն իրանական հասարակության վրա XX դարի առաջին կեսին, Մերձավոր Արևելք, Երևան, 2007, էջ 115-120:
6. Ֆինանսական ոլորտի բարեփոխումներն Իրանում 1920-1940-ական թթ., Մերձավոր Արևելք, Եր., 2008, էջ 145-154:

ВНУТРЕННЯЯ ПОЛИТИКА ПРАВИТЕЛЬСТВА РЕЗА ШАХА ПЕХЛЕВИ (1925-1941гг.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02-“Всемирная история”.

Защита состоится 16-го июня 2009г., в 13⁰⁰ часов на заседании специализированного совета 006, действующего при Институте Востоковедения НАН РА, по адресу: 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24г.

РЕЗЮМЕ

Диссертационная работа посвящена изучению внутренней политики правительства Реза шаха Пехлеви (1925-1941гг.). Всестороннее изучение вопросов, касающихся данного периода истории Ирана, имеет важное научное значение для глубокого понимания объективной оценки не только внутривнутриполитических явлений, но и отношений Ирана сопредельными государствами и странами, имеющими свои интересы в регионе.

Актуальность комплексного изучения внешних и внутренних предпосылок установления монархии Пехлеви и политики правительства Реза шаха обусловлена тем фактом, что данный отрезок времени знаменует собой начало новейшего периода истории Ирана не только в хронологическом плане, но и по масштабу реформ и перемен.

Целью диссертационной работы является всестороннее исследование внешне-внутриполитических явлений в Иране на рубеже 19-го и 20-го веков, что в свою очередь создало возможность для многогранного изучения политики одного из величайших людей 20-го века - Реза шаха Пехлеви, выявления ее принципов и предпосылок. Задачей данной работы, в совокупности с вышесказанным, является также в полной мере и возможности объективно оценить всю глубину реформ, установить причины неудач.

Отдельные аспекты темы данной диссертационной работы освещались в армянской, советской, зарубежной историографии, но по содержанию и структуре она является первым подобным исследованием в отечественном востоковедении.

Теоретической и методологической основой для проведения исследования явились законодательные акты, нормативные документы по теме работы, мемуары непосредственных участников действий и современников, а также фундаментальные теоретические труды крупнейших историков и востоковедов-иранистов.

Работа имеет традиционную структуру и включает в себя введение, основную часть, состоящую из трех глав, заключение, список использованных источников и литературы, а также приложение.

Во *ВВЕДЕНИИ* обосновывается актуальность выбора темы исследования, определяются его цели, задачи и научная новизна, охарактеризовываются методологическая основа и практическое значение работы, а также дается краткий обзор использованных источников и литературы.

Первая глава диссертации озаглавлена *“ПОЛИТИКА ЦЕНТРАЛИЗАЦИИ ИРАНА”*. Она состоит из четырех параграфов. В первом параграфе, озаглавленном *“Политическое положение в Иране в начале 20-го века и установление династии Пехлеви”*, рассматриваются внешние и внутренние предпосылки свержения Каджарской династии и установления династии Пехлеви в Иране. Во втором параграфе, *“Иранская армия как основной гарант централизационной политики государства”*, особое внимание уделяется процессу создания национальной армии и ее роли в стабилизации и централизации Ирана. В третьем параграфе, который озаглавлен *“Паниранизм-как гарант централизации и объединения Ирана”*, подробно рассматривается идея иранского паниранизма, формы и методы националистической политики правительства. И наконец, в последнем параграфе, озаглавленном *“Влияние диктатуры Реза шаха Пехлеви на государственную и общественную жизнь в Иране”*, рассматриваются причины и следствия диктаторской формы правления Реза шаха и дается краткий обзор заключений, сделанных в данной главе.

Вторая глава диссертации, озаглавленная *“ПРОЦЕСС И РЕЗУЛЬТАТЫ МОДЕРНИЗАЦИИ ИРАНА В ПЕРИОД ПРАВЛЕНИЯ РЕЗА ШАХА ПЕХЛЕВИ”*, состоит из четырех параграфов. Здесь подробно рассматриваются направленность модернизационной политики правительства и ее следствия. В первом параграфе, озаглавленном *“Реформы в сфере образования”*, дается подробное описание процесса основания, а также результаты и недостатки светской системы образования в Иране. Второй параграф озаглавлен *“Процесс и результаты судебно-правовых и административных реформ”*. Здесь рассматриваются реформы в сфере законодательства, судообразования и административного устройства. В третьем параграфе, озаглавленном *“Улучшение статуса женщин”*, рассматриваются результаты вышеупомянутых реформ с точки зрения статуса женщин, а также дается краткий очерк истории феминистического движения женщин в конце 19-го, начале 20-го веков. Последний параграф данной главы озаглавлен *“Результаты модернизации Ирана в жизни духовенства”* посвящен изучению роли духовенства в общественно-политической жизни Ирана до и после реформ Реза шаха. В конце дается краткий обзор заключений, сделанных в данной главе.

Последняя, третья глава диссертации озаглавлена *“РЕФОРМЫ В ФИНАНСОВО-ЭКОНОМИЧЕСКОЙ СФЕРЕ ИРАНА В ПРАВЛЕНИЕ РЕЗА ШАХА ПЕХЛЕВИ”*. В ней подробным образом представлены задачи финансово-экономической сферы, а также направленность методов их решений, основанная на принципе государственного капитализма (этатизма), который четко выслеживается во всех отраслях исследуемой сферы. Глава состоит из пяти параграфов, в первом из которых (*“Реформы в финансовой сфере”*) подробно рассматриваются методы и результаты, а также недостатки реформ. Во втором параграфе (*“Индустрия и сельское хозяйство”*) представлены процессы основания и развития индустриального производства. Во второй части рассматриваются недостатки аграрных реформ правительства Реза шаха. В третьем параграфе (*“Торговля”*) особое внимание уделяется выявлению и анализу политики государственного капитализма в сфере торговли. Четвертый параграф озаглавлен *“Транспорт и связь”*. Здесь представлены подробности транспортного строительства в Иране и создания единой

транспортной сети, основания систем водного и воздушного транспорта. В данном параграфе особое внимание уделяется такому важному факту, как приобретение иранским правительством стратегически важных систем телеграфной и телефонной связи. Без сомнения, апогеем реформ рассматриваемой сферы является строительство Трансиранской железной дороги. Наконец в последнем параграфе, озаглавленном *"Эксплуатация природных ресурсов"*, освещается проблема иранской нефти в контексте англо-иранского нефтяного конфликта 1932/33гг, а также выявляются причины позиции иранского правительства в решении данного вопроса. В конце дается краткий обзор заключений, сделанных в данной главе.

В **ЗАКЛЮЧЕНИИ** диссертационной работы представлены основные выводы по рассмотренным проблемам.

LUSINE STEPANYAN
THE INTERNAL POLICY OF THE GOVERNMENT
OF REZA SHAH PAHLAVI (1925-1941)

Handwritten notes in Armenian and English:

Արեւիկ
Հասցե
Հայաստան, Երևան
Հանրապետության
Ստանդարտիզացիայի
նախարարություն
25.05.05թ.

Handwritten signature: *JK*